Տարեկան հաշվետվություն

2023

Իրավախորհրդատվություն և ներկայացուցչություն





ԻՊԱՍ իրավաբանների ներգրավմամբ վարույթները առավելապես առնչվել են.

- Սեփականության իրավունքի պաշտպանությանը
- Աշխատանքային իրավունքի ապահովմանը
- Սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանությանը
- Պատշաճ վարչարարության իրավունքի սահմանափակման հարցերին
- Երեխայի իրավունքների ապահովմանը, ամուսնաընտանեկան հարցերին
- Հավաքների ազատության իրավունքին
- Տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանությանը
- Խոսքի ազատության պաշտպանության իրավունքի վերաբերյալ հարցերին
- Մասնավոր ոլորտում Խտրականության արգելքի ապահովման վերաբերյալ հարցերին
- Ազատության, ազատ տեղաշարժի, հավաքների ազատության իրավունքների սահմանափակման հարցերին

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթների մշտադիտարկում և ուսումնասիրություն
- Դատավորների ընտրության և նշանակման գործընթացի մշտադիտարկում և ուսումնասիրություն

ԱՄՓՈՓՈՒՄ. 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԴԽ ԿՈՂՄԻՑ ՔՆՆՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Զեկույցում ամփոփվել են Հակակոռուպցիոն կոմիտեի մշտադիտարկման արդյունքները՝ ներկայացվել են Կոմիտեի ստեղծման, նախագահի և ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրությունների գործընթացները, ինչպես նաև Կոմիտեի անկախության, հաշվետվողականության և թափանցիկության երաշխիքների, բյուջեի, ծառայողների վարձատրության և այլ հարցերի ուսումնասիրությունը:

Զեկույցում ամփոփվել է Դատարանի ձևավորման, դատավորների ընտրության և նշանակման գործընթացը, վերլուծվել են առկա օրենսդրական կարգավորումները, դատարանի իրավասության շրջանակը, թեկնածուներից պահանջվող չափանիշներն ու որակավորման քննությունների կազմակերպման կարգավորումները, պրակտիկայում դրանց կիրառումը, վերհանվել են խնդիրներն ու մտահոգությունները, որոնց կապացությամբ զեկույցում ներկայացվում են առաջարկություններ:





ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

2023 թ. ԻՊԱՍ-ն իրականացրել է դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով բաց մրցույթի անցկացման դիտարկում. դիտարկվել և ամփոփվել են հարցազրույցների արդյունքները, մրցույթի ընթացքը, թեկնածուների բարեվարքության ստուգման գործընթացը, մասնագիտական պատրաստվածության ստուգումը, վերհանվել են բովանդակային և կազմակերպչական խնդիրները:

ԻՊԱՍ-Ը ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՐՑԱԽԻ ԵՎ ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆԱ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԻՊԱՍ-ը գործընկերների հետ համատեղ զեկույց է հրապարակել Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետևանքով հայկական մշակույթային ժառանգությանը հասցված վնասների և սպառնալիքների վերաբերյալ, ներկայացրել այն ՅՈՒՆԵՍԿՕ-ին:

ԻՊԱՍ-ը գործընկերների հետ համատեղ ՄԱԿ-ին է ներկայացրել Համընդհանուր պարբերական դիտարկման (Universal Periodic Review) այլընտրանքային զեկույց Ադրբեջանի վերաբերյալ, գնահատվել է այդ երկրում մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների կատարումը, ներկայացվել են առաջարկներ:

ԻՊԱՍ-ը ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի «Խոշտանգումը և մարդասիրական ու մարդու իրավունքների կոպիտ այլ խախտումները» թեմայով Մարդկային չափման հարցերով համաժողովի ընթացքում ծավալուն ելույթներով անդրադարձել է 2020 թ.-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախում առաջացած հումանիտար խնդիրները, ինչպես նաև ներկայացրել է 44-օրյա պատերազմի ընթացքում և 2022թ.-ի սեպտեմբերին միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ խախտումները:

ԻՊԱՍ-ը ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի Մարդկային չափման հարցերով համաժողովին ներկայացրել է 2023թ.-ին Արցախում Ադրբեջանի իրականացրած ռազմական գործողություններն ու դրա հետևանքով մարդու իրավունքների խախտումները, ներկայացրել Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ապօրինի ձերբակալումները:

ԻՊԱՍ-ը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի 22-րդ մոնիտորինգային հանդիպմանը ուշադրություն է հրավիրել ՀՀ անվտանգային մարտահրավերներիի ու Լեռնային Ղարաբաղում զարգացումների վրա՝ նշվել է, որ Ադրբեջանի կողմից շարունակական հարձակումներն ու անվտանգային ռիսկերը բացասական են անդրադառնում ՀՀ-ում բարեփոխումների ընթացքի վրա:

ՀԱՄԱՏԵՂ ԶԵԿՈՒՅՑ

Հատուկ զեկույց Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետևանքով հայկական մշակութային ժառանգությանը հասցված վնասների և սպառնալիքների վերաբերյալ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Քաղաքականության համառոտագիր. ԱԱՏՄ աշխատանքային տեսուչների լիազորությունների իրացման հետ կապված խնդիրներ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայացվել են 15 առաջարկներ՝ դատահիրավական, հակակոռուպցիոն, հարկային, տեղեկատվության ազատության, հաշտարարության, Մարդու իրավունքների պաշտպանի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունների և ռազմավարությունների վերաբերյալ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արվել է 20 հայտարարություն Ադրբեջանի կողմից ԼՂ շրջափակման, ԼՂ ռազմաքաղաքական ղեկավարության ապօրինի ձերբակալության, Ոստիկանության բռնությունների, Աժ պատգամավորների էթիկական խնդիրների, ՏԻՄ ղեկավար մարմինների ձևավորման վրա ապօրինի ներգործության և այլ հարցերի վերաբերյալ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Արդարադատության ոլորտի բարեփոխումներոիմ ներգրավված մասնագետների կարողությունների զարգացման դասընթաց

Մարդու իրավունքների կրթության դաընթացներ

Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմնահարցերը խորագրով փակ քննարկում

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄԱՄՈՒԼ

2023թ.-ին ԻՊԱՍ իրավական հարցերով փորձագետները շարունակել են ներկայացված լինել Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ.-ի ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի կատարման Մշտադիտարկման խորհրդի կազմում, ինչպես նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբում:

25

Ասուլիսներ, հանրային քննարկումներ և հարցազրույցներ

21

Մասնակցություն համաժողովների, հանդիպումների, դեսպանների և ոլորտային պատասխանատուների հետ

10

Մասնակություն խորհրդի նիստերի

3

Միջազգային այցեր

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

Հեռախոս
+374 98 505 303, 010 505 303

էլ. փոստ
info@prwb.am

Կայքէջ
www.prwb.am

Հասցե՝ Ամիրյան 11